Հաստատված է«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 10 առ 01.10.2009թ.)

# ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԲՈԼՈՐ ՌԻՍԿԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1.** Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» և այլ իրավական ակտերին համապատասխան:

**1.2.** «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) իրականացնում է կապալառուի բոլոր ռիսկերից ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական վնասների ապահովագրություն դասի աշխատանքային ռիսկերից ապահովագրություն ենթադասով:

**1.3.** Սույն պայմաններով կիրառվող հիմնական հասկացությունները

**Ապահովագրության պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր) - Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում,

**Ապահովագրող** - «Սիլ Ինշուրանս» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ նաև Ընկերություն), որն իրականացնում է ապահովագրական գործնեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի,

**Ապահովադիր** - օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, ֆիզիկական անձ,

**Շահառու** - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

**Ապահովագրության օբյեկտ** - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

**Ապահովագրական ռիսկ** - ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ պայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

**Ապահովագրական պատահարը** - պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովադրին կամ Շահառուին ապահովագրական հատուցում սույն պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

**Ապահովագրական հատուցում** (այսուհետ՝ Հատուցում) - ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

**Ապահովագրական գումար** - Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը: Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

**Ապահովագրավճարը** – Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**2.1.** Ապահովագրողը չի հատուցում Ապահովադրի վնասները կործանումից, վնասվածքից կամ պատասխանատվությունից, որոնք առաջ են գալիս, ծագում են կամ որոնց չափը մեծանում է ուղղակի կամ անուղղակի հետևյալ պատճառների հետևանքով՝

**2.1.1.** պատերազմի, ռազմական ուժերի ներխուժման, թշնամու գործողությունների, ռազմական գործողությունների (անկախ նրանից պատերազմ հայտարարվել է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, խռովության, հեղափոխության, ապստամբության, ընբոստության, գործադուլի, լոկաուտի, քաղաքացիական անկարգությունների, զինվորականների կողմից իշխանության զավթման կամ իշխանության հակաօրինական զավթման, չարագործների խմբի գործողությունների կամ անձանց գործողությունների, որոնք գործում են քաղաքական կազմակերպությունների հանձնարարությամբ կամ նրանց հետ փոխգործակցողների կողմից, դավադրության, բռնագրավման, հարկադիր օտարման իրավաբանորեն կամ փաստացի գոյություն ունեցող կառավարության կամ իշխանության որևէ մարմնի կարգադրությամբ՝ ռեկվիզիցիայի կամ քանդման կամ վնասման հետևանքով,

**2.1.2.** միջուկային ռեակցիայի, միջուկային ճառագայթման կամ ռադիոակտիվ աղտոտման հետևանքով,

**2.1.3.** Ապահովադրի կամ իր ներկայացուցիչների կանխամտածված գործողությունների կամ կոպիտ անզգուշության հետևանքով,

**2.1.4.** աշխատանքների ամբողջական կամ մասնակի դադարեցման հետևանքով,

**2.1.5.** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հետևանքներով:

## 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**Ապահովագրության Պայմանագրի կնքումը և գործողության ժամկետները:**

**3.1.** Պայմանագրի կնքման հիմք է ծառայում Ապահովադրի կողմից լրացրած Ապահովագրողի կողմից տրամադրած դիմում-հարցաթերթիկը:
**3.2.** Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:
**3.3.** Պայմանագրին կարող է փոխարինել նաև Վկայագիրը:
**3.4.** Պայմանագրին կից կարող են թողարկվել հավելվածներ, որոնք հանդիսանում եմ Պայմանագրի անբաժանելի մասը:
**3.5.** Պայմանագրի և/կամ Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Պայմանագրի կրկնօրինակը:
**3.6.** Ապահովագրողի պատասխանատվությունն, անկախ Պայմանագրում նշված հնարավոր այլ ժամկետից, սկսվում է անմիջապես աշխատանքի սկսումից հետո կամ Պայմանագրում թվարկված առարկաների շինարարական հրապարակում բեռնաթափելուց հետո: Պատասխանատվությունն ավարտվում է ապահովագրված շինարարական աշխատանքների մաս-մաս ընդունումով կամ շահագործման հանձնելով:
**3.7.** Ապահովագրությունը վերջանում է ոչ ուշ այն պահից, որը նշված է Պայմանագրում որպես գործողության ավարտ: Ապահովագրության ժամկետի երկարացման համար պահանջվում է Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությունը:
**3.8.** Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու իրեն հայտնի հավանականության մասին:
**3.9.** Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը ճանաչել անվավեր և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները:

**Ապահովագրության պայմանագրի դադարումը:**

**3.10. Ապահովագրության Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարել**

**3.10.1.** Ապահովադրի նախաձեռնությամբ՝ այդ մասին **ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 15 ՕՐ ԱՌԱՋ** ծանուցելով Ապահովագրողին: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը համաձայն հետևյալ բանաձևի.

$$Ա_վ = (Ա_պ - Հ_կ)*Պ_չ/Պ-5000 \text{ ՀՀ դրամ}$$

$Ա_վ$ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար
$Ա_պ$ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար
$Հ_կ$ - Ապահովադրին կատարած հատուցումների գումար
$Պ_չ$ - Պայմանագրի չլրացած օրերի քանակ
Պ – Պայմանագրով սահմանված գործողության օրերի քանակը
5000 ՀՀ դրամ - գործավարման ծախսեր

**3.10.2.** և՝ Ապահովագրողի, և՝ Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելուց եռամսյա ժամկետում: Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:
**3.10.3.** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**4.1.** Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն Ապահովադրի կողմից Պայմանագրի Պայմանների պահպանման և կատարման դեպքում, ինչքանով դրանք վերաբերում են Ապահովադրի գործողություններին կամ նրա կողմից իր պարտավորությունների պահպանմանը, և եթե նրա կողմից հաղորդված տվյալները, պատասխանները հարցաթերթիկում ճիշտ են:
**4.2.** Բաժինը (Բաժինները) հանդիսանում են Պայմանագրի բաղկացուցիչ մասը: Ամենուր, որտեղ Պայմաններում օգտագործվում է Պայմանագիրը արտահայտությունը, այն ընդգրկում է իր մեջ հավելվածները և Բաժինը (Բաժինները): Ամեն մի բառ (կամ արտահայտություն), որի համար Պայմանագրի որևէ մասում սահմանված է եղել որոշակի նշանակություն, պահպանվում է այդ նշանակությունը, անկախ նրանից՝ որտեղ է հանդիպում տվյալ բառը (կամ արտահայտությունը):

**4.3.** Ապահովադիրն իր հաշվին իրականացնում է ողջամիտ նախազգուշական միջոցներ և ճշգրտորեն կատարում է Ապահովագրողի բոլոր անհրաժեշտ հանձնարարությունները՝ կորուստների, վնասվածքների կանխարգելման և պատասխանատվության բացառման համար, ինչպես նաև օրենսդրության և օգտագործվող նյութերի արտադրողների պահանջները:

**4.4.**

**4.4.1.** Ապահովագրողի ներկայացուցիչները ցանկացած ժամանակ իրավունք ունեն (ողջամտության սահմաններում) կատարել օբյեկտի զննությունը և հսկողությունը, իսկ Ապահովադիրն Ապահովագրողի ներկայացուցիչներին տրամադրում է ռիսկի գնահատման համար բոլոր անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները:

**4.4.2.** Ապահովադիրն **ԱՆՀԱՊԱՂ** հեռախոսով և նամակով հայտնում է Ապահովագրողին **ռիսկի ամեն մի էական փոփոխության մասին** և իր հաշվին իրականացնում է կանխազգուշական լրացուցիչ բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ստեղծված իրավիճակում: Անհրաժեշտության դեպքում հատուցման ծավալը և/կամ ապահովագրական պարգևի չափը պետք է ճշգրտվեն: Ապահովադիրն իրավունք չունի կատարել կամ թույլ տալ փոփոխություններ, որոնք բարձրացնում են ռիսկի աստիճանը, եթե Պայմանագրի շրջանակում ապահովագրության շարունակումն Ապահովագրողի կողմից գրավոր չի հաստատվել:

**4.5.** Որևէ իրադարձության վրա հասնելու դեպքում, որը Պայմանագրի շրջանակներում կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու համար, **Ապահովադիրը պարտավոր է՝**

**4.5.1.** **ԱՆՀԱՊԱՂ**, սակայն **ՈՉ ՈՒՇ ՔԱՆ 48 ԺԱՄՎԱԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**, հայտնել Ապահովագրողին պատահարի մասին,

**4.5.2.** ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վնասների նվազեցման համար,

**4.5.3.** պահպանել վնասված մասերը և ներկայացնել նրանք Ապահովագրողի ներկայացուցչին կամ փորձագետին՝ զննման համար,

**4.5.4.** տրամադրել բոլոր տվյալները և փաստաթղթերը, որոնք կպահանջվեն Ապահովագրողի կողմից,

**4.5.5.** գողության կամ կողոպուտի հետևանքով վնասների առաջացման դեպքում պատահածի մասին հայտնել ոստիկանությանը,

**4.5.6.** Ապահովագրողը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն կորստի, վնասվածքների կամ պատասխանատվության համար, որոնց ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ողջամիտ ժամկետներում նա տեղյակ չի պահվել:

**4.6.** Ապահովադիրը, սույն պայմանի համաձայն Ապահովագրողին տեղեկացնելու դեպքում, կարող է կատարել աննշան վնասվածքների նորոգում կամ փոխարինել վնասված մասերը: Մնացած բոլոր դեպքերում Ապահովագրողի ներկայացուցչին պետք է հնարավորություն տրվի զննել վնասվածքը, մինչև նորոգման աշխատանքների կատարումը կամ փոփոխություններ մտցնելը: Եթե Ապահովագրողի ներկայացուցչի կողմից ողջամիտ ժամկետում տեսչական ստուգում չկատարվի (հաշվի առնելով ստեղծված իրավիճակը) Ապահովադիրն իրավունք ունի կատարել նորոգման աշխատանքներ կամ փոխել վնասված մասերը:

**4.7.** Ապահովագրողի պատասխանատվությունն վնասվածք ունեցող ապահովագրված առարկայի համար Պայմանագրի սահմաններում դադարում է այն դեպքում, եթե անհապաղ չի կատարվել այդ առարկայի մասնագիտական նորոգումը:

**4.8.** Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի հաշվին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և Ապահովագրողի կողմից պահանջվող միջոցները, օժանդակել դրանց կամ թույլ տալ դրանց կատարումը՝ իրավունքների իրականացման կամ դատական վճիռների բողոքարկման գործողությունների իրականացման համար կամ Պայմանագրի շրջանակներում չապահովագրված այլ անձանցից հատուցում ստանալու համար, որոնցից Ապահովագրողն հատուցում ստանալու ուղղակի կամ անուղղակի իրավունք ունի կամ կունենար՝ կամ պահանջի իրավունքի փոխանցման կարգով կամ իրավունք կստանար վնասի հատուցման վճարումից հետո Պայմանագրի սահմաններում, անկախ այն հանգամանքը, առկա է կամ կառաջանա արդյոք անհրաժեշտություն այդպիսի գործողությունների իրականացման համար մինչև Ապահովագրողի կողմից ապահովադրի վնասը հատուցելը կամ դրանից հետո:

**4.9.** Եթե վեճ է ծագում Պայմանագրի սահմաններում վճարվող գումարի վերաբերյալ (պայմանով, որ պատասխանատվությունը որպես այդպիսին ընդունված է), ապա այդ վեճի մեջ ընդգրկված կողմերը հարցի լուծումը հանձնում են միջնորդ դատարան՝ «Միջնորդ դատարանների և միջնորդ դատարանակազմության մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**4.10.** Եթե վնասի հատուցման պահանջն կեղծ է կամ պահանջը ներկայացնելու համար օգտագործվում են կեղծ տեղեկություններ կամ Ապահովադիրը կամ նրա կողմից լիազորված անձը դիմում է անօրինական միջոցների կամ ձևերի Պայմանագրից անհիմն հարստանալու նպատակով, կամ եթե Ապահովագրողի վնասի հատուցման վերաբերյալ պահանջը մերժելուց հետո կամ միջնորդ դատարանում գործի քննության արդյունքում վճիռ կայացվելուց հետո երեք ամսվա ընթացքում հայց չներկայացվի դատարան, ապա Պայմանագրի սահմաններում Ապահովադիրը կորցնում է պահանջի իրավունքը:

**4.11.** Եթե վնասի ծագման պահին Պայմանագրի շրջանակներում գործում է ուրիշ ապահովագրական պայմանագիր, որն ապահովագրում է նույն վնասներից վնասվածքից կամ պատասխանատվությունից, ապա Ապահովագրողը պարտավոր է կատարել տվյալ վնասի, վնասվածքի կամ պատասխանատվության հատուցման վերաբերյալ պահանջի միայն իր բաժինը:

***4.12.*** **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ***Եթե Ապահովադիրը (ներկայացուցիչը) չի կատարում սույն բաժնով նախատեսված իր պարտականությունները, ապա Ապահովագրողը իրավունք ունի մերժելու հայցի պահանջը:***

## 5. ԲԱԺԻՆ 1. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ

**5.1.** Ապահովագրողը և Ապահովադիրը պայմանավորվել են, որ Ապահովագրողը այն դեպքերում, երբ Պայմանագրի գործողության ժամկետում Պայմանագրում թվարկված առարկաներին կամ նրա մասերին հասցվում է անսպասելի և հանկարծակի նյութական վնաս, եթե այն պայմանավորված չէ այնպիսի պատճառներով, որոնք պատկանում են հատուկ նշված բացառությունների թվին, որոնց հետևանքով անհրաժեշտություն է առաջանում կատարել նորոգում կամ փոփոխում, ապա Ապահովագրողը ստորև նախատեսված կարգով հատուցում է Ապահովադրին նրա նյութական վնասը կանխիկ գումարով՝ ձեռք բերելով նոր առարկաներ կամ կատարելով նորոգում (Ապահովագրողի ընտրանքով) մինչև այն գումարի սահմանը, որի չափը նշված է Պայմանագրի համապատասխան կետերում, բայց արդյունքում ոչ ավել, քան Պայմանագրով պայմանավորված ամեն մի առանձին ապահովագրական պատահարի համար և Պայնագրում նշված ընդհանուր ապահովագրական գումարը: Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին մաքրման ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով, որի հասցված վնասը ենթակա է հատուցման Պայմանագրի սահմաններում, այն պայմանով, որ Պայմանագրով դրա համար առանձնացված է հատուկ գումար:

**5.2. Հատուկ բացառություններ Բաժնով 1-ով**

**5.2.1.** Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում՝

**5.2.1.1.** Պայմանագրում նշված չհատուցվող գումարի համար, որի չափով ապահովադիրը վնաս է կրում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

**5.2.1.2.** ցանկացած բնույթի անուղղակի վնասների համար, ներառյալ տուժանքները, կետանցման վնասները, խախտումները և պայմանագրերի անվավեր ճանաչման հետևանքով կրած վնասները,

**5.2.1.3.** Սխալ նախագծման հետևանքով հասցված վնասների կամ վնասվածքների համար,

**5.2.1.4.** փոխարինման, նորոգման կամ նյութերի օգտագործման կամ շինարարական աշխատանքների թերությունների վերացման ծախսերի համար՝ այդ բացառությունը վերաբերվում է միայն անմիջականորեն տուժած մասերին, բայց այն չի տարածվում սարքին վիճակում գտնվող մասերին արատավոր նյութերի օգտագործման կամ շինարարական աշխատանքների թերություններով կատարման պատճառով առաջացած դժբախտ դեպքերի հետևանքով այդ մասերին հասցված կործանման կամ վնասի վրա,

**5.2.1.5.** մաշվածքի, կորոզիայի, թթվացման, ինչպես նաև չօգտագործման կամ եղանակի սովորական պայմանների ազդեցությամբ արժեքի անկման համար,

**5.2.1.6.** մեքենաների և կամ էլեկտրական սարքավորման ներքին անսարքությունների համար, որոնք ծագել են շահագործման ընթացքում, կամ շինարարական հրապարակի սարքավորումների և շինարարական մեքենաների անսարքության հետևանքով,

**5.2.1.7.** նավերի և ինքնաթիռների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների կործանման կամ վնասման համար, որոնք թույլատրվել են շահագործման ընդհանուր օգտագործման ճանապարհներում,

**5.2.1.8.** փաստաթղթերի, գծագրերի, հաշիվների, կանխիկ գումարի, կնիքների կամ դրոշմակնիքների, արժեթղթերի կամ չեկերի կորուստի կամ վնասվածքի համար,

**5.2.1.9.** կորուստների և վնասների համար, որոնք հայտնաբերվում միայն գույքագրման ընթացքում:

**5.3. Բաժին 1-ին կիրառելու դրույթներ / Վերապահություն 1՝ Ապահովագրական գումարներ**

**5.3.1.** Սույն ապահովագրության համար պահանջվում է, որպեսզի պայմանագրում նշված ապահովագրական գումարներն ավելի քիչ չլինեն՝

**5.3.1.1.** շինարարական աշխատանքների լրիվ արժեքից դրանց ավարտման պահի դրությամբ, ներառյալ նյութերի արժեքը, աշխատավարձը, փոխադրման ծախսերը, մաքսային և հարկային վճարները, ինչպես նաև նյութերի և կառուցողի կողմից մատակարարվող շինարարական նյութերի արժեքը,

**5.3.1.2.** շինարարական հրապարակի սարքավորումների և շինարարական մեքենաների վերականգնման արժեքից, կրկնակի ապահովագրված նույնատիպ և նույն հզորությամբ առարկաների ձեռքբերման արժեքից, բացի դրանից, ապահովադիրը պարտավորվում է ավելացնել կամ նվազեցնել ապահովագրական գումարներն աշխատավարձի կամ գների էական փոփոխության դեպքում, ընդ որում ավելացումը կամ նվազեցումն ուժի մեջ են միայն ապահովագրական պայմանագրում գրավոր կերպով համապատասխան լրացումներ կատարելու պահից:

**5.3.2.** Եթե վնասի առաջացման դեպքում պարզվի, որ ապահովագրական գումարները ցածր են անհրաժեշտ չափից, ապահովադրին վնասի հատուցման չափը Պայմանագրի համաձայն կրճատվում է այնպիսի չափով, որը հավասար է փաստացի ապահովագրական գումարների հարաբերությանը՝ անհրաժեշտ ապահովագրական գումարների չափին: Սույն դրույթի գործողությունը տարածվում է յուրաքանչյուր առարկայի և ամեն մի ծախսային հոդվածի վրա առանձին-առանձին:

**5.4. Վերապահություն 2. Պահանջների (հայցերի) քննարկման կարգը**

Պայմանագրի սահմաններում կորուստները և վնասները հատուցվում են հետևյալ կարգով՝

**5.4.1.** վնասների վերացման դեպքում հատուցվում են նորոգման ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված առարկաների այնպիսի վիճակի բերելու, որում դրանք եղել են անմիջականորեն վնասի առաջացումից առաջ, հանած մնացորդային արժեքը,

5.4.2. լրիվ կործանման դեպքում հատուցվում է ապահովագրված առարկաների փաստացի արժեքը՝ դրանց վնասի ծագումից անմիջապես առաջ հանած մնացորդային արժեքը, այն գումարի չափով, որը ապահովադիրը կրել է որպես ծախս և ապահովագրական գումարը չգերազանցող չափով, պայմանով, որ կատարված են պայմանագրի դրույթները և պայմանները:

5.5. Ապահովագրողը վնասը հատուցում է միայն այն բանից հետո, երբ նա իրեն ներկայացրած անհրաժեշտ հաշիվների կամ փաստաթղթերի օգնությամբ համոզվում է, որ կատարված է նորոգում կամ փոխված են վնասված մասերը: Բոլոր վերանորոգման ենթակա վնասվածքները վերանորոգվում են, եթե վերանորոգման ծախսերը գերազանցում են մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը ապահովագրված առարկաների եղած արժեքը: Այս դեպքում վնասների հատուցումը կատարվում է բ) կետում նախատեսված կարգով:

5.6. Ապահովագրողը նախնական նորոգման համար ծախսերը կրում է միայն այն դեպքում, եթե այդ նորոգումը հանդիսանում է վերջնական նորոգման մասը և եթե այդ կապակցությամբ նորոգման համար ընդհանուր ծախսերը չեն ավելանում: Ծախսերը, որոնք կապված են հնարավոր փոփոխությունների, լրացումների և կամ կատարելագործումների հետ, պայմանագրի սահմաններում ենթակա չեն հատուցման:

5.7. **Վերապահություն 3՝ Ապահովագրության ծավալի ընդարձակումը**

Աշխատավարձի հավելումն արտաժամյա, գիշերային ժամերին, տոնական օրերին կամ գերծանրաբեռնված աշխատանքների համար սույն ապահովագրության սահմաններում ապահովագրված են միայն այն դեպքերում, եթե այդ մասին նախապես գրավոր համաձայնեցվել է կողմերի միջև:

## 6. ԲԱԺԻՆ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին Պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմանում այն չափով, որով Ապահովադիրը պատասխանատվություն է կրում գործող օրենսդրությամբ այն վնասների համար, որոնք տեղի են ունեցել՝

6.1.1. մարմնական վնասվածքների կամ երրորդ անձանց հիվանդության՝ դժբախտ պատահարների հետևանքով (մահացու ելքով կամ ոչ),

6.1.2. վնասների կամ ոչնչացման, որոնք հասցվել են երրորդ անձանց սեփականությանը, որոնք պայմանավորված են դժբախտ դեպքերով, եթե այդ դժբախտ դեպքերը տեղի են ունենում անմիջականորեն կապված բաժին 1-ով ապահովագրված շինարարական կամ մոնտաժային աշխատանքների իրականացման վայրում կամ դրա անմիջական հարևանությամբ տեղի ունեցած աշխատանքների հետ ապահովագրության ժամկետի ընթացքում:

6.2. Վնասի հատուցման պարտավորություն նախատեսող պահանջ ներկայացվելու դեպքում, Ապահովագրողը, բացի վերը նշվածից, Ապահովադրի հանդեպ պատասխանատվություն է կրում նաև՝

6.2.1. դատական ծախսերի համար, որոնց հատուցման վերաբերյալ պահանջ է ներկայացվել Ապահովադրի դեմ,

6.2.2. այլ վնասների և ծախսերի համար, որոնք կատարվել են Ապահովագրողի համաձայնությամբ՝ պայմանով, որ սույն բաժնով սահմանված Ապահովագրողի պատասխանատվությունը չի գերազանցի Պայմանագրում նշված Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը:

6.3. **Հատուկ բացառություններ 2-րդ Բաժնով**

Ապահովագրողը չի հատուցում Ապահովադրին՝

6.3.1. վնասը Պայմանագրում նշված չհատուցվող գումարի չափով, որի համար Ապահովադիրն անձամբ պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

6.3.2. այն վնասները, որոնք առաջացել են Պայմանագրի Բաժին 1-ի համաձայն հատուցված կամ հատուցման ենթակա վնասվածքների նորոգման կամ վնասված առարկաների փոփոխման ընթացքում,

6.3.3. երրորդ անձանց ունեցվածքին, հողին կամ շենքերին պատճառված վնասները, որոնք առաջացել են վիբրացիայի (թրթռման) կամ հեռացման կամ կրող տարրերի թուլացման հետևանքով, կամ մարմնական վնասվածքներով կամ գույքային կորուստներով, որոնք առաջացել են կամ պայմանավորված են այդ վնասվածքներով, բացառությամբ այն դեպքերի, որոնց վերաբերյալ հատուկ նշված է լրացումներում:

6.3.4. Պատասխանատվությունները՝

6.3.4.1. ձեռնարկատիրոջ (ձեռնարկատերերի), կառուցողի (կառուցողների) կամ այլ ֆիրմայի, որը կատարում է Բաժին 1-ով ամբողջությամբ կամ մասնակի ապահովագրված շինարարական աշխատանքներ, բանվորների կամ ծառայողների կամ նրանց ընտանիքների անդամների մարմնական վնասվածքների կամ հիվանդության համար,

6.3.4.2. շինարարական ձեռնարկության (ձեռնարկությունների), կառուցողի (կառուցողների) կամ այլ ֆիրմայի, որին հանձնարարված է Բաժին 1-ով ամբողջությամբ կամ մասնակի ապահովագրված շինարարական աշխատանքների կատարումը, դրանց կամ դրանց ծառայողներին կամ բանվորներին պատկանող, նրանց հովանության, հսկողության տակ գտնվող կամ պահպանության տված առարկաների կործանման կամ վնասման համար,

6.3.4.3. ճանապարհներում շահագործման թույլատրված տրանսպորտային միջոցների կամ լողացող միջոցների կամ ինքնաթիռների կողմից առաջացրած դժբախտ դեպքերի համար,

6.3.4.4. Ապահովագրի կողմից կամավոր կերպով հատուցման վճարման կամ այլ տեսակի փոխհատուցման հնարավոր պարտավորությունների համար, բացառությամբ այն դեպքերի, որոնցով այդ պատասխանատվությունը գոյություն է ունեցել նաև առանց այդպիսի պայմանավորվածության:

6.4. **Հատուկ պայմաններ 2-րդ Բաժնով**

6.4.1. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովագիրը և ոչ ոք նրա անունից իրավունք չունի զիջումներ կատարել, առաջ քաշել առաջարկություններ, տալ խոստումներ, կատարել վճարումներ կամ ընդունել պատասխանատվություն: Ցանկության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրի անունից իր վրա վերցնել նրա պաշտպանությունը, վնասների կարգավորումը կամ Ապահովագրի անունից իր օգտին ներկայացնել հայցեր վնասների հատուցման մասին կամ վնասների հատուցման վերաբերյալ պահանջների հիմնավորվածության մասին: Ապահովագրողը գործերի վարման կամ վնասների վերացման ընթացքում օգտվում է գործելու լրիվ ազատությամբ: Ապահովագիրը պարտավոր է տրամադրել Ապահովագրողին նրա կողմից պահանջվող փաստաթղթերը և ամեն կերպ աջակցել նրան:

6.4.2. Դժբախտ դեպքերի ժամանակ Ապահովագրողը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ժամանակ կարող է Ապահովագրին վճարել ապահովագրության առավելագույն գումարը (հանած արդեն ստացած գումարները) կամ ավելի փոքր չափի գումար, որոնց հաշվին բավարարվում են պահանջը կամ պահանջները որևիցէ դժբախտ դեպքի համար, որի հետևանքով Ապահովագրողը սույն բաժնի սահմաններում ազատվում է տվյալ դժբախտ դեպքի համար ցանկացած հետագա պատասխանատվությունից:

## 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց **ԱՊԱՀՈՎԱԳԻՐԸ** պետք է **ԱՆՀԱՊԱՂ,** սակայն **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** տեղյակ պահի Ապահովագրողին:

7.2. Պատահարի ի հայտ գալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովագիրը պետք է ներկայացնի հայցային դիմումը:

7.3. Ապահովագրական հայցին կից ներկայացվող հիմնական փաստաթղթերն են՝

7.3.1. Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը/եզրակացությունը/տեղեկանքը (առկայության դեպքում),

7.3.2. Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),

7.3.3. ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

7.4. Ապահովագրի կողմից ներկայացրած յուրաքանչյուր հայցին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:

7.5. Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է ընդունում հայցի պահանջի բավարարման կամ մերժման մասին:

7.6. Հայցի պահանջի բավարարման դեպքում Հատուցման վճարումը կատարվում է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

7.7. Հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրին Պայմանագրում նշված հասցեով:

## 8. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

8.1. **Երկրաշարժի գոտիներում շինությունների երաշխիք**

8.1.1. Սույնով սահմանվում և համաձայնվում է, որ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրական պայմանագրում ներառված կամ դրանով ամրագրված կարգերով, բացառություններով, դրույթներով և պայմաններով, ապահովագրողն ապահովագրին հատուցում է երկրաշարժի հետևանքով առաջացած միայն այնպիսի կորուստը, վնասը կամ պատասխանատվությունը, եթե ապահովագիրն ապացուցում է, որ նախագծում հաշվի է առնվել երկրաշարժի ռիսկը՝ տվյալ շինարարության համար գործող շինարարական նորմերին համապատասխան, շինարարական նյութերը և աշխատանքները համապատասխանում են որակական չափանիշներին, և պահպանվել են ելակետային հաշվարկները:

8.2. **Շինարարական հրապարակում հրշեջ միջոցներին և հակահրդեհային պաշտպանությանը վերաբերող հատուկ պայմաններ**

8.2.1. Սույնով սահմանվում և համաձայնվում է, որ եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրում ներառված կամ դրանով ամրագրված կարգերով, բացառություններով, դրույթներով և պայմաններով, ապահովագրողը հատուցում է Ապահովագրի միայն այն կորուստը կամ վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է հրդեհի կամ պայթյունի հետևանքով, այն պարտադիր պայմանով որ՝

8.2.1.1. Աշխատանքների ընթացքում առկա են գործարկման պատրաստ բավարար քանակով համապատասխան հրդեհաշեջ սարքավորումներ և միջոցներ: Տեղադրված են գործարկման պատրաստ

հիդրանտների բաշխիչ ծորաններ, որոնք գտնվում է ընթացիկ փուլում շին. աշխատանքների իրականացման ամենաբարձր մակարդակից մեկ մակարդակ ցածր և, որոնց ծորակները փակված են ժամանակավոր փականներով:

**8.2.1.2.** Այն պահանարները, որտեղ պահվում են հրդահաշեջ փողրակի կոճերը և շարժական կրակմարիչները ստուգվում են պարբերաբար՝ շաբաթն առնվազն երկու անգամ:

**8.2.1.3.** Փայտակաղապարները հանելուց հետո՝ հնարավորին չափ շուտ, տեղադրվում են տեղական կանոնակարգերով պահանջվող հրակայուն մեկուսախցեր: Վերելակի հորերի, ինժեներական կոմունիկացիաների և այլ անցուղիների մուտքերը նախապես՝ հնարավորին չափ շուտ, սակայն ոչ ուշ, քան ներքին հարդարման աշխատանքների սկսելը, փակվում են:

**8.2.1.4.** Կանոնավոր կերպով հեռացվում են թափոնները: Հարդարման ենթակա հատակների վրայից յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում մաքրվում և հեռացվում են դյուրավառ թափոնները:

**8.2.1.5.** Կիրառվում է «աշխատանքի անցնելու թույլտվության» համակարգ կապալառուի այն բոլոր աշխատակիցների համար, որոնք ընդգրկված են այսպես կոչված «հրավտանգավոր աշխատանքներում», որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- հղկում /սրում/, հատում կամ եռակցում
- այրիչ գործիքների /կրակմղիչ և կրակբռնիչ/ կիրառում պահանջող աշախատանքներ
- Տաք բիտումինի կիրառում

կամ ջերմության անջատում նախատեսող ցանկացած այլ աշխատանքներ:

Այդպիսի ցանկացած «հրավտանգավոր աշխատանքների» կատարման տեղանքը պետք է ստուգվի աշխատանքներն ավատելուց մեկ ժամ հետո:

**8.2.1.6.** Շինարարական կամ մոնտաժման նյութերը պահեստավորվում են առանձին պահեստային շինություններում, որոնցից յուրաքանչյուրում պահեստավորված նյութերի արժեքը չպետք է գերազանցի ստորև նախատեսվածը: Առանձին պահեստային շինությունների հեռավորությունը մեկը մյուսից պետք է լինի առնվազն 50 մետր, կամ դրանք միմյանցից պետք է առանձնացվեն հրակայուն պատերով: Բոլոր դյուրավառ նյութերը և հատկապես դյուրավառ հեղուկներն ու գազերը պետք է պահեստավորվեն բավականին հեռու այն վայրից, որտեղ իրականացվում է շինարարություն կամ մոնտաժում:

**8.2.1.7.** Նշանակվում է շին.հրապարակի անվատանգության աշխատանքների համակարգող: Տեղադրվում է հրդեհի տագնապի հուսալի ազդանշանային համակարգ և, հնարավորության դեպքում՝ մոտակա հրշեջ ծառայության հետ ուղղակի հաղորդակցման կապ: Կանոնավոր կերպով իրականացվում և թարմացվում են հակահրդահային պաշտպանության միջոցառումների և գործողությունների պլանները: Կապալառուի աշխատակիցների մասնակցությամբ շաբաթը մեկ անգամ անց է կացվում հրդեհի մարման ուսուցողական վարժություններ: Մոտակա հրշեջ ծառայությունը ծանոթացվում է շին. հրապարակի տեղանքին, որտեղ ապահովվում է այդ ծառայության ուղղակի մուտքի հնարավորություն՝ օրվա բոլոր ժամերին:

**8.2.1.8.** Շին. հրապարակը ցանկապատվում է, իսկ մուտքը՝ հսկվում:

## 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ)

**9.1.** Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի չափով:

**9.2.** Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահմպանմամբ:

**9.3.** Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

**9.4.** Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավել վճարված հատուցման գումարը:

## 10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**10.1.** Պայմանագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

**10.2.** Պայմանագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**10.3.** Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

**10.4.** Եթե դատարանը սահմանի, որ սույն պայմանագրի ցանկացած տերմին կամ դրույթ կարող է հակասել պետական տերմինին, ուր գտնվում է տվյալ դատարանը, ապա հիշյալ տերմինը կամ դրույթը պետք է մեկնաբանվի և/կամ փոփոխվի այնպես, որպեսզի համաձայնեցվի հիշյալ պետական տերմինի հետ: